




ՀԱՆԴԻՍ ԿԻՍԵՄԱՆԵՑ

ՎԻՊԱՍՆԱԿԱՆ, ԱՐՈՐԵՍՏԻՑ ԵՒ ԳԵՏՈՐԹՆԱՆՑ, ՆՈՐԵԼՈՐԿԻ ԵՒ ԶՈՒՆԲԱՆԻՆԵՑ:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Ա. ՏԱՐԻ.

1862 ՄԱՐՏ 1

ԹԻԻ 5

ԱԼՖՐԷՑ ՈՒ ՆԻԳԻՆԷ

ԳԼՈՒԽ Ա.

Չ-ր ԷՐԷ-ՐԷ ԺԷ:



Յամին 1760 Մարտ
20-ին տխուր և սոսկալի
գիշեր մըն էր թմբասառ
մէջ, թանձր ու մթա-
ղին ամպեր երկնից ե-
րեսը շրջապատած էին,
կարկառաւոր սառտիկ
անձրեւ մը կը տեղայր,
որոտմունք, փայլակ,

կայծակ մէկմէկու կը յաջորդէին, և հիւսիսային
ցրտաշունչ հովը զարհուրելի կերպով մը կը փչէր:
Ամէն մարդ բնութեան այս կատաղութենէն ահ ու
դողի մէջ ինկած իր յարկին տակ պառկաւորում
էր, և փողոցներուն մէջ ամենեւին մէկը չէր տես-
նուէր: Քաղաքին զանգակը կէս գիշեր զարկաւ և
տակաւին անձրեւը սառտեալաբար կը շարունակուէր,
երկու հոգի գինետան մը մէջ առանձին նստած,
առջևնին սեղանատախտակ մը և վրան ամանով գի-
նի և քանի մը խորոված ձուկեր զրած կը վափային,
և ժամանակ առ ժամանակ պատառ մը առնելով, սի-
րով մէկ մէկու կենաց համար զաւաթներ կը պար-
պէին:

Ասոնցմէ մէկը բարձրահասակ ու նիհար մարդ
մըն էր, աչքերը խոշոր ու կատաղի, երկայն մօրու-
քով ու երկայն մազերով, գէմքը գինիէն կարմ-
րած, տեսքը ահոելի, նայուածքը անգուլթ, զինքը
աեմնողը կը սոսկար, և այս մարդուն անունը կը
կոչուէր Քօսթա: Միւս ընկերը որ անտարբեր

կերպով մը նստած էր, դինին քիչ մը աւելի կը նետէր, պղնձադոյն դէմքը բոլորովին կարմրցած էր, լայն ճակատը, թաւուտ յոնքերը, երկայն պէտքերը և չիղպիին կազմուածքը յայտնի կը ցուցնէին իւր սաստիկ ոյժը և այս կը կոչուէր Ալէքսի: Երկուքնին քովէ քով ցած աթոռներու վրայ նստած խիստ մտեւոյնաբար կը խօսակցէին. անկարելի էր զիրենք հոն տեսնողը սրտին մէջ սարսափ մը չ'ըզալ, դինետունը որ ստորերկրեայ բանդ մը կը չ'ըզալ, դինետունը որ ստորերկրեայ բանդ մը կը կառներով զարգարուած էր, մեծկակ սեւ շուն մը չիթայակապ պահուած կը մնար, և կանթեղի ազօտ լոյսով մը կը լուսաւորուէր այս որջը, երկու ընկերք երկայն ու բարակ զանազան տարբեր խօսակցութեանց վրայ վիճէին և աղէկ մը ուտել և խմելէն վերջը, Քօսթա քիչ մը ատեն լռեց և մօտ գրութեամբ ընկերին երեսը նայեցաւ, և աթոռը աւելի անոր քով մօտեցնելով, աչքերը չորս գին գարձուց և խիստ ցած ձայնով մը ըսաւ. « Բարեկամ, բան մը պիտի առաջարկեմ քեզի, բայց մինչև որ խօսք չ'տաս որ պիտի հաւանիս, չեմ կրնար ըսել »:

— Բէ՛ նայինք, պատասխան'ց Ալէքսի, կարելի է այնպիսի գործ մըն է որ չեմ կրնար հաւանութիւն ցուցնել, դիտես ինչպէս բարեկամ ենք, և եթէ քու շահուդ նպատաւոր է, վստահ եղի՛ր որ սիրով յանձնառու կ'ըլլամ, բաւական է որ 'ի գործ գնելու կարողութիւնս ներէ:

— Այ՛ տք է նախ գործադրութիւնը խօստանաս ու ետքը միտքս յայտնեմ, քաջ գիտեմ որ ձեռքդ կուզայ և շատ անգամ փորձառու եղած ենք 'ի միասին, ուստի կ'աղաչեմ որ չէ չըսես:

— Բէ՛ եղբայր, ինչ է նայինք:

— Խօստմունք կուզեմ:

— Ե՛ր կը խօստանամ:

— Բայց պէտք է նախ երդմամբ հաստատես:

— Կը նայիմ որ շատ հաստատ կը բռնես գործը. արդեօք.

— Ենթ որ բան մը.

— Ի՞նչ.

— Մէկը.

— Ենթեա՛ն խորհուրդ, ըսաւ Ալէքսի, ձեռքը ճակատը տանելով:

— Բայց ինչո՞ւ ագտի կը զարհուրես, բարեկամ:

— Որովհետեւ իմացայ կամքդ.

— Բայց ինչ է գիտցածդ, կրկնեց Քօսթա աւելի ցած ձայնիւ:

— Ենչու՞ ահ կուես արիւնը. ըսաւ Ալէքսի բառերը լեզուին տակ ծամծմելով:

— Այո՛, պատասխանեց Քօսթա աչքերը խոժողուցած և գէմքին վրայ աւելի կատաղութիւն և վայրենութիւն ցուցնելով, մէկուն արիւնը պիտի թափենք 'ի միասին, այո՛ և դուն ինչ պիտի հաւանիս և պիտի օգնես »:

Ալէքսի այս խօսքերէն, վրասն որսըփուք մը եկաւ և ճակտէն սկսաւ սրաղ քրտինք վազել, ու աչքերը դէպ 'ի դեպին ծոց և լուռ ու մունչ կը մտածէր:

Քօսթա որ միշտ չորս կողմ խիստ մտադրութեամբ կը դիտէր թէ արդեօք զինքը տեսնող կամ մտիկ ընող մը կայ, Ալէքսիին ձեռքէն բռնելով կարուկ ձայնով մը ըսաւ. « Ալէքսի, ինչ կը մըտածես, այս առաջին անգամն է, ասիկա առաջինը պիտի ըլլայ որ այսպէս կը վախնաս ու կը տարտա, քիչ անգամ մէկ տեղ գործ տեսանք, դեռ երեք ամիս չ'կայ երբ երկու քահանայի կամք կատարելու համար հռովմ պայինք և սրտոն Աթուրը սպաննեցինք: Ափսո՛ս քու աներկիւզ բնութեանդ, եթէ դիտնաս թէ ո՞վ է առաջարկողը և ինչ շահ ունինք կարծեմ բնաւ չես մտածեր »:

Ալէքսի խորունկ քունէ արթնցածի պէս աչքերը վեր վերցուց և սկսաւ շփել, ու սրտէն հառաչելով տխուր կերպով մը Քօսթային պատասխանեց:

« Քօսթա, չեմ կրնար քեզ յայտնել թէ ինչ պէս խղճի անհանգստութիւն մը կ'ըզամ, չեմ կրնար բնաւ քեզ նկարագրել թէ ինչպէս երեւակայութիւնս և զգացումներս զիս կը տանջեն չարաչար, ամէն րոպէ այն անմեղ անձանց ուրուականները կը կարծեմ թէ զիս կը հալածեն ու ինձմէ վրէժխնդիր կ'ուզեն ըլլալ: Ա՛հ, Քօսթա, գիշերները աչքերս քուն չ'կայ, աշխարհք ինչ պատիժ եղեր է, երկինք նայած ատենս կը կարծեմ թէ հրալից շանթեր պիտի տեղան գլխուս, և զիս 'ի քթիթ ական պիտի ոչնչացընեն, ո՛հ, դեռ կը յիշեմ սրտոն Աթուրին վերջին խօսքերը, անոր ձայնը լսելեացս մէջ կը հնչէ թէ « Մի կ'աղաչեմ կը պաղատիմ դուր ունեցիք վրաս, ինչպեցէք երկրասարգութեանս. . . . » աղէ բարեկամ, թող զիս, մերժէ այդ խորհուրդը մտքդ, ուրիշին կիրքը յաղեցնելու համար անմեղ արիւններով մի շաղախէր ձեռքդ, վերստին կ'աղաչեմ թող զիս. . . . դուն ինչ որ կուզես ըրէ. . . . »:

Քօսթա այս խօսքերուն վրայ գոյնը նետեց, սիրտը թնթաց և կարուկ ձայնիւ մը կրկնեց, « Մի՛րեքի Ալէքսի, քու խօսքերդ զիս շատ կը վշտացնէ, չէի յուսար քեզմէ որ մեր այսքան տարուան բարեկամութիւնը խախտես և այս առաջարկութիւնը չըն-

ՇԵՆՔՈՒՄ

ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՅՆԿԱՆԸ

ՇԵՆՔՈՒՄ (1)

ԱՐԱՐՈՒՄԸ Բ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՊԵՆՏԻՍ - Փորթիայի տան մէջ սենեակ մը .

Փորթիայի տան տէրերը :

ՄԱՐԹԻ ԻՇԵՄԵԼ և իր հետեւակները . Փորթիայի տան տէրերը .

Իշ. Մար. Արեւուն թխացող զօրութեամբը սեղած գէմքիս համար ինձմէ մի խորշիք, որու պինտ մօտ դրացի մըն եմ՝ ու քովը կը բնակիմ : Բերէք ինձ հիւսիսային կողմը ծնած ամենագեղեցիկ անձը՝ ուր Փետրուարի կրակը հաղիւ թէ ձիւնին բարակ թեւերը կրնայ հալեցնել, ու ձեր սիրուն համար փախչողները ընենք ու նայինք թէ որո՞ւ արիւնը աւելի կարմիր է, ի՞նչ թէ իմին : Չեղբսեմ, տիկին, որ այս իմ տեսնուածքս հզօր մարդիկներ վարհուրած է . ու երգում կ'ընեն, որ սիրոյս համար, մեր կողմի ամենընտիր կոյսերն իսկ յափշտակուեցան, այս գոյնս չէի փոխէ՛ր՝ միայն թէ, սիրուն թագուհի, ձեր սիրտը վաստակելու համար ըլլար :

Փորթ. Բնորութեան վրայ խօսելով՝ օրիորդական սիրուն աչքերովս միայն հաճելի երեւցած չեմ, ասկէջ զատ՝ իմ ճակատագրիս վիճակը առջիս արդէք մը կը գնէ, որ իմ կամքիս ուղած ընտրութիւնը չի կարենամ ընել, բայց թէ որ հայրըս՝ պատուիրած ու իր իմաստութեամբն ալ ինձ քահանայ մը դրած չըլլար, որ հրամանոց արդէն ըսած միջոցներովս միայն իս վաստակողին կնիկն ըլլամ, դուք իսկ, ո՞վ անուանի իշխան, մինչև հիմայ իս ուղղորդուն պէս՝ սիրոյս մասնակից պիտի ըլլայիք :

Իշ. Մար. Ետոր համար ալ շնորհակալ եմ, որքան, կ'աղաչեմ զձեզ, իս անտակներուն քով տարէք որ իմ բաղդս փորձեմ : Եյս սուրով՝ որ Դահլէ և Պարսկի իշխան մ'ընտանած է, որ Սոլիման Սուլթանի պատերազմներուն երեք ճակատամարտներն յաղթած է՝ ճշմարիտ կ'ըսեմ, ամենէ արիւնքուն աչքեր ունեցող քոջերուն ե-

րեսին գոյնը նետել կու տամ, ու երկրի երեսը զանուղ ամենէ յանգուցն սիրտ ունեցողները բանի մը տեղ չեմ գներ, մօրմն կաթ ուտելու վրայ եղող արջու թոժիւնները մատակներուն ձեռքէն կը քաշեմ կ'առնեմ, հատապէք ինձ, որս փնտրելու ելած մանչող առիւծին վրան իսկ ծաղըր կ'ընեմ, որ ձեզ վաստակիմ, տիկին . բայց, ափսոս աս վայրկեան, որ թէ որ Հեքիւլէս ու Լիւկիաս քուէներով խաղան տեսնելու համար թէ մի է աւելի ուժով՝ բաղդը, տկարագոյն ձեռքով նետուած խաղին առջև մեծագոյն նետուածք մը կը բերէ . ահա աս կերպով Աղկիաէս իսկ իւր ծառայէն կրնայ յաղթահարել, և այսպէս, կոյր բաղդըն ինձ առաջնորդ ըլլալով՝ անարժանի մը ձեռք բերելու կարող եղածը ինձմէ գրկելու կարող կ'ըլլայ և կը թողու որ ցատկով մտնիմ :

Փորթ. Դուք ձեր բաղդը նայեցէք, և կամ բնական ընտրելու փորձը մ'ընէք . եթէ ոչ, ընտրելու էք նէ՝ առաջ երգում ըրէք, որ բաղդերնիդ չի բանի նէ, անկէ՛աք մէկ մըն ալ և ոչ մէկ տիկնոջ հետ ամուսնութեան խօսք մը պիտ' ընէք . վասն որոյ, ասոնք մտքերնիդ պահեցէք :

Իշ. Մար. Չէ, չեմ ըներ . ուր է, իս իմ բաղդիս քով տարէք :

Փորթ. Ելախ, տաճար երթալ պէտք է, ու ճաշէն ետք՝ ձեր բաղդաւորութիւնը երեսն կ'ըլլէ :

Իշ. Մար. Ուրեմն բարեբաղդութիւն, կամ շնորհներդ կը տեսնեմ, կամ մարդոց ամենազարեւին կ'ըլլամ :

ԻՆԵՆ՝

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՎԵՆԵՏԻԿԻ - փողոց մը :

ԼՈՆԴՈՆ ԿՕՊՅՈՒ ԻՆՏԵՆ՝

ԼՈՆԴ. Անշուշտ սա Հրէայ վարպետիս քովէն փախչելու պիտի ծառայէ ինձ խղճմանքս . չարը սիրտս է մտեր, ու իս փորձել կ'ուզէ՝ ըսելով, Կո'պո, ԼՈՆԴՈՆ Կո'պո, Բարի ԼՈՆԴՈՆ, կամ Բարի Կո'պո, կամ Բարի ԼՈՆԴՈՆ Կո'պո . Իժիլ ԼՈՆԴՈՆ, Խոնդրուիլ ԼՈՆԴՈՆ, Դաճաք առ իս խղճմանքս կը գտնայ՝ չէ, կ'ըսէ, զգուշ կեցի՛ր, պարիէշ ԼՈՆԴՈՆ, զգուշալի՛ր, պարիէշ Կո'պո, կամ ինչպէս որ ըսի, պարիէշ ԼՈՆԴՈՆ Կո'պո, Բարի ԼՈՆԴՈՆ, Խոնդրուիլ ԼՈՆԴՈՆ : Եղեկ՝ բայց նախանձոտ չարը առջին վարպետը կը գաշէ, գնա՛, կ'ըսէ չարը, Խոնդրուիլ, կ'ըսէ անօրէնը, ԼՈՆԴՈՆ Կո'պո, Խոնդրուիլ :

նուրի :

Կօղ . Կ'աղաչեմ, տէր իմ, սանկ կայնեցէք նայիմ, սակայն ստոյգ եմ, դուք Լօնչէլօն չէք . զաւակս դուք չէք :

Լօնչ . Կ'աղաչեմ, երկայն խօսքերը մէկ - դի թողունք , առէք ինծի օրհնութիւննիդ , Լօնչէլօն ես եմ, որ ձեր մանուկն էր , որ ձեր զաւակն է , որ ձեր տղան ըլլայ պիտի միշտ :

Կօղ . Չեմ կրնար հաւատալ՝ որ դուք իմ զաւակս էք :

(Դարձակիւ)

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ք

Ըսանց իշիմօն գործածեցու . Ըսողութեոյ՝ բեմդէ , նար չեցէի , աչ գոյնէս ներկեչ .

Ը . ԸՍՊՈՒՐԻ ԶՈՒՐՐ ԴԻՆԵԼ

Ըս 150 տրամ ասպուր , կամ ասպուր , պաղ ջրի մէջ թրջէ , և մէկ քանի անգամ ձեռքովդ սխմէ , որ ամեն ասպուրն ալ ջուրը ծծէ , 6-7 ժամ թրջուած մնալէն ետքը , կանաւաքոյի կամ մաղէ տոպրակի մը մէջ լեցուր , աղէկ մը սխմէ որ դեղին ջուրը վաղէ տոպրակէն , նորէն տոպրակին մէջ ջուր լեցուր սխմէ , մինչև որ տոպրակը սխմած ատենդ , ելած ջուրը դեղնութիւն չունենայ , թափէ ան ելած դեղին ջուրը . քեզի պէտք եղածը տոպրակին մէջի լուացուած ասպուրն է :

Խօսվայի մը մէջ կամ թէնճիրէյի մը մէջ 5 օխայ ջուր լեցուր , 10 տրամ բօթասը մէջը դիր որ էրիմիշ ըլլայ , և տոպրակին մէջի ասպուրը ջրին մէջ լեցուր , 5-6 ժամ մնալէն ետքը մաքուր տոպրակի մը մէջ պարպէ . տոպրակն ալ մաքուր ամանի մը վրայ բռնէ , տոպրակէն վաղած ջուրը , աւրլ պէտք եղած պոյան է : Տոպրակը աղէկ մը սխմէլէն ետքը՝ մէջը քիչ մը ջուր լեցուր նորէն սխմէ որ մնացած պոյաները , ելլեն . ու տոպրակին մէջի ասպուրը նետէ : Ըս պատրաստած ջուրդ պահելու չիգար . պէտք է որ շինած օրդ դործածես :

ԲԼՄՊԼ ԲԷՂ ԴԷԷԼ

Ըս վերի շինուած ասպուրի ջրէն 300 տրամ մո , և վրան այնչափ ջուր լեցուր որ ներկելու կը տաւ թրջելու բաւականանայ , սկսէ գործեւ (1)

(1) Երբոր գործել կ'ըսէմք , կ'ուզէմք ըսել որ լուր կամ

5 թաքիքէյի չափ , և հանէ կտաւդ մէջէն : 2-րդ տար որ ասպուրի ջրէն զայ շնես . 3) արամի չափ ասպուրի լեցուր մէջը , որ երբոր ասպուրի ջրէն լեցուրիդ պոյաննս՝ հաղիւ թէ էքչիկ համ ունենայ : Կտաւդ մէջը դիր նորէն և ժամ մը դործէ հանէ ինչպէս որ վերը ըսինք , այսինքն սխմէ և ետքը 3 ձեռք ջրով լուայ : Բայց վերջին ջրին մէջ քիչ մ Բարի-բարի զայնար ջրի մէջ հալեցնելով այնչափ դնելու է որ համը զգալի ըլլայ , առ վերջին ջրով ալ լուալէդ ետքը սխմէ , հանէ , քեօրկէ տեղ մը չորցուր , չըլլայ որ արեւը չորցունես : Եւ կ'ըլլայ այս գոյնը :

ՎԵՐԳԻ ԲԷՂ ԴԷԷԼ

Ըս ջի շինուած ասպուրի ջրէն 600 տրամ մո և վերի բէնպէն շինելուդ պէս ներկէ , ասպուրի լեցուր բաւական շատ դնելու է որ համը էքչիկ ըլլայ . կտաւդ մէջը դիր մէկ ժամ դործէ , կամ մինչև որ եթէ մատդ ջրին պաթմիշ ընես , ու մատեղ վաղած տամլան լոյսին նայիս նէ անգոյն երևնայ . սխմէ լուա վերինին պէս : Եւ կ'ըլլայ այս գոյնը :

ՆԵՐ ՉԻՉԻԻ ԲԷՂ ԴԷԷԼ

Ըս ջի շինուած ասպուրի ջրէն 2 ու կէս օխայ մո և բէնպէ պոյամիշ ընելուն պէս ըրէ , մէկ երկու անգամ կտաւը ջրէն հանելու է , և ամէն մէկ անգամին զաւաթ մը ասպուրի լեցուրնէլու է ասպուրի ջրին մէջ , անանի որ ասպուրի ջրին համը սատտիկ զօրաւոր կծու ըլլայ . առ գոյնը ստանալու համար մէկ քանի ժամ դործելու է , որ ասպուրի ամէն գոյնը կտաւին վրայ անցնի և յետոյ զատ թէղնէի մը մէջ ջրով լուա : Եւ կ'ըլլայ այս

որ և իյէ ուրիշ նիւթ մը որ պիտի ներկես , ասպուրն ջրին մէջ թաթիսել սխմելու ջուրը ծծել տալ , ու նորէն հանել ու նորէն պաթմիշ ընելու գործողութիւնն է :

Ղերմակի Գիրքը Տարեւել- Իրա :

Բրէնտե եղած ռապունը ջրով էփէ , լաթե անցուր , երբ կը նայիս որ ըլլա՞տի է , քիչ մը ուրիշ ամանի մը մէջ գիր , քիւրքը անոր մէջ խօթէ , հանէ , առանց շփելու կամացուկ մը սխմէ . առ զործողութիւնը քանի մը անգամ կրկնէ , և ամէն անգամուն սապունի ջուրը փոխէ , և վերջապէս անձրեկ կամ գետի ջրով լուայ , ճերմակ բըրինձի փոշի ցանէ վրան և զգուշութեամբ սանաորէ :

Լճան Գիրքը շինելու- Իրա :

Ըս երկու մաս քէօմուրու թող մէկ մաս զում և մէկ մաս սրաբախճրոյի չամուր , քիչ մը ջուրով շաղէ , ուզած մեծութեամբդ կնտէ , չորցուր , կրակ վառելէդ ետքը ասոնցմէ մէկ քանի հատ վրան դիր , պայտի քէօմուրէն սաստիկ տաքութիւն կուտայ և չխառնելու ըլլաս նէ աասը ժամ կը գիմանայ :

— Մշակելը դժուար տունկերը արդասաւոր ընելու համար , ջրով լուծուած սոսիճ (գուդկալ) կը զործածեն զաղլիացիք , բայց ջուրը մշջը դըրուած սոսինձէն հաղիւ թէ իր զոյնը պիտի փոխէ , թէ որ թանձր ըլլայ մահաբեր է արմատներուն :

— (Սլան (քօլա) եռացնելու ատենդ , քիչ մը բարակ աղ սրսկէ մէջը , որ իւթիւ ըրած ժամանակդ չի փակչի , ոմանք շաքար կը դնեն և ոմանք ալ ձէթ :

— Կ'ըստի թէ ստուգուած իրողութիւն մըն է թէ իւրտած սղոցի փոշին արեւուն ճառագայթներուն ներգործութեամբը վեց ժամուն մէջ կը փըօրնկի :

Ղանձիքը սենեակէն կորսնցունել :

Ըս կէս չայի դքալ սև ծեծուած պիպեր , մկ չայի դքալ էսմէր շէքէր , և մէկ կերակուրի դքալ անարատ կաթ , աղէկ մը խառնէ ամէնը մէկ , ու ճանճ շատ եղած տեղը բարձր տեղ մը դիր , շուտով կ'աներևութան :

Լճան Կայ շինել :

Մէկ օխայ բաթիթիսը խաշէ , ջրէն հանելէդ ետքը թող որ պուզանմիշ ըլլայ , և կրակին վրայ դիր քանի մը թաքիքէ , ու յետոյ աղէկ մը էզմէ , քանի որ տահա տաք է 2 ու կէս օխայ ալիւրի հետ խառնէ , 300 արամ ըլլա՞տի ջուր լեցուր վրան մէկ դքալ աղ և իրեք մեծ դքալ մայայով աղէկ

մը շաղէլէդ ետքը չորս ժամէն ետքը եփէ :

ԻՄԱՍՏԱՌԹԵԱՆ ՅՈՂԻ ԿԱԹԻՆՆԵՐ

Ըմենամեծ գժուարութիւնները չ'ուսացածներնէս կը գտնենք :

Բնական կոյր եղողները իրենց պիտութիւնը կ'զգան՝ բայց ինչ պիտի ըսենք բարոյական կոյր եղողներուն :

Խաղաղութիւնը հոգւոյն իրիկուան աստղն է , առաքինութիւնն ալ իր արեգակը , որ երկուքն ալ մէկզմէ կէ բնաւ չ'են հեռանար :

Թէնոր մէկը ըսէ՝ թէ արդար մարդ մը տեսայ հացի կարօս՝ կը պատասխանեմ թէ անիկայ անունի տեղ մի էր որ ուրիշ արդար մարդ չ'կար :

Բաղմութեան մէջ մէկու մը՝ քեզ շատ կը պատուեմ ըսես նէ , քու թշնամիդ կ'ընես զան . ասանկ ալ ազգին անգամներուն մէկուն :

Ինչպէս որ երկիր մը որչափ որ պարարտ ըլլայ չ'կրնար բերրի ըլլալ առանց մշակութեան . ասանկ ալ միաբը առանց կրթութեան չ'կրնար բարի պառւղ յառաջ բերել :

Բարի յատկութեան տէր մարդոց հետ ընկերացիր , եթէ քու համբաւդ կ'ուզես պատուել . քանզի առաւել աղէկէ առանձին մնալ քան թէ գէշ ընկերներու հետ :

Գեղեցկութիւնը սէրը կը գրդօէ , բայց միշտիկ գեղեցկութիւնը չ'կրնար պահել զան :

Եթէ գեղեցկութեան համար ամուսնանաս բոլոր կենացդ մէջ ինքզինքդ պիտի կապես այն առածովդ , որ ոչ պիտի երկայն տես . ոչ ալ տարի մը սիրես :

Ծ Ն Ո Ւ Ն Դ Ք

- Փետր . 21 . Տիկին Թորոս պերպէր Զակարեան . էգ .
- " 18 . " Տիրացու Զոհմանէս Ախմէան . էգ .
- " 19 . " Խաւճիկեան Զաւհանէս . մեռեալ .
- " 27 . " Կարապետ Ամիրան . արու :

Մ Ը Ն Ք

- Փետր . 25 . Մէլեմնցի Մ . Վիմն .
- " " Ապարդացի Թաթեւոս որդի .

**Տ Ն Օ Ր Ե Ն Ե Ի Խ Մ Բ Ը Գ Ի Ր
Ս Ը Ր Գ Ի Ս Փ Ը Փ Ը Օ Ե Ն Ը**

**Ջ Մ Ի Ի Ռ Ն Ի Ը
Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Տ Ե Տ Ե Ա Ն**